— Ի՞նչ օգուտ պիտի հասցնէր նա, — պատասխանեցի ես փոքր-ինչ բարկացած կերպով: — Սատանան երբեք հրեշտակ չի դառնայ:

— Ինչու չի դառնայ, — ասաց նա, ծիծաղելով իմ խռովութեան վրայ: — Սատանան հէնց առաջուց հրեշտակ էր, բայց հանգամանքները նրան սատանայ շինեցին: Վասակին պէտք է հասկանալ, իսկ նրան հասկանալու համար պէտք է լաւ ուսումնասիրել հայոց պատմութիւնը: Դու մի վիճիր ինձ հետ, սիրելի Ֆարհատ, քեզ պէտք է կարդալ, շատ կարդալ...

Նա մօտեցաւ ինձ եւ ձեռքը դրեց իմ ուսի վրայ:

Այդ միջոցին ներս մտաւ վարպետ Փանոսի գործարանի աշակերտներից մէկը, յայտնեց, թէ մի քանի մարդիկ ցանկանում էին տեսնել Ասլանի հետ:

— Նայեցէք՝ ի՞նչ մարդիկ են, — խնդրեց ինձ Ասլանը, — միայն մի փոքր սպասել տոեցէք, մինչեւ ես բոլորովին հագնվիմ:

— Նրանք կսպասե՞ն... — ասաց գործարանի աշակերտը խորամանկ ժպիտով, — մինչեւ երեկոյ էլ կսպասեն... դեռ արեւը չծագած եկել, նստել են բակի դռան մօտ եւ սպասում են...

Պէտք է ասած, երբ քաղաքի հայ վաճառականները լսեցին, որ Ասլանը հնութիւններով հետաքրքրւում է, այլեւս մեզ հանգստութիւն չէին տալիս: Ում տանը մի կոտրած խեցի կամ երկաթի կտոր կար, բերում էր, ցոյց էր տալիս, եւ աշխատում էր մի քանի ոսկիներ կորզել: Դուրս գալով փողոցը, տեսայ, որ հայ վաճառականներ էին, երեք հոգի, եւ կարգով նստած էին բակի դռան մօտ շինուած հողեթումբի վրայ, «տերողորմեա» էին քաշում ու խօսում էին միմեանց հետ երկրի գործերի վրայ: Տեսնելով ինձ, բոլորը ոտքի կանգնեցին, որպէս մի նշանաւոր մարդու առջեւ եւ սկսեցին բարովել ինձ հետ, իմ առողջութիւնը հարցնել, կարծես թէ վաղեմի բարեկամներ լինէին: Մէկը նրանցից ինձ կոչեց մինչեւ անգամ «աղաէ: Վարպետ Փանոսի ախոռատան ծառայից յետոյ այդերկրորդ անձն էր, որ այդպիսի տիտղոսով էր ինձ դիմում:

— Ի՞նչ էք կամենում, — հարցրի ես:

Նրանք փոխանակ պատասխանելու, սկսեցին դուրս հանել իրանց ծոցերից, գրպաններից զանազան իրեղէններ, որ փաթաթել էին շորի կտորների մէջ:

— Ինձ ո՞ւր էք ցոյց տալիս, ես խօ գնողը չեմ:

— Դու էլ որ տեսնես, մե՞ղք կը լինի, աղա, — ասաց նրանցից մէկը, որի ձեռքերի վրայ երեւում էին Երուսաղէմի ուխտաւորի կապոյտ նշաններ: — Քո